ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

15.03.2016թ. N 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2016թվականի N 07

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հաստատել Հրազդանի քաղաքային համանքի ավագանու 2016 թվականի մարտի 15-ի N 03 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին

2. Հրազդանի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 10-ի N 06 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

3. Հրազդանի քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

4. Հրազդանի քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

5. Գումարը հետ վերադարձնելու մասին

6. Վարձավճարները գիջելու մասին

7. Հրազդանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին

8. Հրազդանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին

9. Շինությունը վարձակալելու մասին

10. Հրազդանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքը վարձակալության հանձնելու մասին

11. Հրազդանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի վարձակալության պայմանագրերը վերակնքելու և տարեկան վարձաչափերը սահմանելու մասին

12. Հրազդանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու և Հրազդան քաղաքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 30-ի N93 որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը չեղյալ ճանաչելու մասին

13. Սուրիկ Ֆահրադյանին վարձակալության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին
14. Հրազդանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը և գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԼԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՆՅԱՋՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ
11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2016թվականի N 08

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի փետրվարի 9-ի N 101-Ա հրամանը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան քաղաքի ավագանու 2013 թվականի մայիսի 21-ի «Հրազդանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 40 որոշումը:
2.Հաստատել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՋԱԲԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԵԼ
7. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐԳՈՒՄ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Հավելված
Հրազդանի քաղաքային
համայնքի ավագանու
2016 թվականի մարտի 15-ի
N 08 որոշման

Կազմված է 15 մարտի 2016թ.
Բաղկացած է 10 թերթից
«Հաստատված է»
ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի
քաղաքային համայնքի
ավագանու 15 մարտի 2016թ.
N 08 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝

Ա. Դանիելյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
/ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ/

ՀՐԱԶԴԱՆ 2016 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի (այսուհետ՝ համայնք) համայնքապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը և օրենքով ու համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ավագանին, կազմակերպում են իրենց գործունեությունը:

2. Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է համայնքային ծառայողների, ինչպես նաև անձնակազմի լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց միջոցով:

Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

3. Ավագանին և համայնքի ղեկավարը Աշխատակազմի միջոցով համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները, համակարգում համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:

4. Աշխատակազմը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է ավագանու որոշմամբ:

5. Աշխատակազմի լիազորությունները սահմանվում են օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ ավագանու որոշումներով, համայնքի ղեկավարի որոշումներով ու կարգադրություններով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

6. Աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, սույն կանոնադրության հիման վրա:

7. Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող.

8. Աշխատակազմը կարող է կազմված լինել կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից:

9. Աշխատակազմի նպատակն ու խնդիրը համայնքի ղեկավարի և ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի ղեկավարի մասնակցության ապահովումն է:

10. Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը:

11. Աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության կամ համայնքի զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ, այլ անհատականացման միջոցներ:

12. Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

13. Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

14. Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանման կողմից:

16. Աշխատակազմի լրիվ անվանումն է՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ»:

17. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս,Սահմանադրության հրապարակ 1:

2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

19. Համայնքի ղեկավարն իր լիազորությունները իրականացնում է Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

20. Համայնքի ղեկավարը '

1) աշխատակազմի (այդ թվում առանձնացված ստորաբաժանումների) և բյուջետային հիմնարկների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը

2) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

3) օրենքով նախատեսված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում է դասային աստիճաններից.

4) ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում:

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

21. Համայնքի ղեկավարի տեղակալը՝

1) համակարգում է համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքները՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում.

2) Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմին (մասնագետներին, կառուցվածքային և

առանձնացված ստորաբաժանումներին) տրվող կոնկրետ հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

3) Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ.

4) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), ինչպես նաև համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

5) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

6) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները.

7) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին.

8) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին.

9) Համայնքի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ.

10) Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

22.Համայնքի ղեկավարի տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

23. Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

24. Համայնքի ղեկավարը կարող է ունենալ խորհրդականներ, օգնականներ, մամուլի քարտուղար, ռեֆերենտ, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է համայնքի ղեկավարը

25. Համայնքի ղեկավարի խորհրդականը՝

1) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմում է իր աշխատանքային ծրագիրը.

2) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.

3) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.

4) Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.

5) Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.

6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

26. Համայնքի ղեկավարի օգնականը՝

1) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում համայնքի ղեկավարին.

2) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմակերպում է համայնքի ղեկավարի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին.

3) կազմակերպում է համայնքի ղեկավարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.

4) համագործակցելով Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների) հետ՝ համայնքի ղեկավարի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.

5) նախապատրաստում և համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ.

6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

27. Ավագանին՝

1) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.

2) որոշում է Աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

3) հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը:

4) սահմանում է համայնքի ղեկավարի, նրա տեղակալի, խորհրդականի, օգնականի, մամուլի քարտուղարի, Աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը:

5) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

6) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

7) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

8) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները.

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

28. Աշխատակազմի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Աշխատակազմի քարտուղարը:

29. Աշխատակազմի քարտուղարը՝

1) օրենքով, այլ իրավական ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2) իր իրավասության շրջանակում իրականացնում է Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը.

3) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ:

4) մշակում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման նկատմամբ, արդյունքների մասին զեկուցում է համայնքի ղեկավարին.

5) ապահովում է համայնքի բյուջետային միջոցներից ծախսերի կատարումը.

6) կազմակերպում է համայնքի քաղաքացիների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների սահմանված կարգով քննարկումը, ինչպես նաև Աշխատակազմի գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

7) համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելն ու ներկայացնելը, ինչպես նաև Աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումների արդյունքում հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

8) համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծերը.

9) ապահովում է Աշխատակազմում համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

10) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

11) օրենքով սահմանված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում համայնքային ծառայության դասային աստիճաններից.

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

13) օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ենթակա ցուցումներ,

14) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

30. Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

31. Աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և ներքին աուդիտորներն իրականացնում են «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորությունները: Աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը հաշվետու է համայնքի ղեկավարին ու օրենքով նախատեսված դեպքերում վերջինիս ներկայացնում է հաշվետվություններ:

3. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

32. Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, որն Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում է (ամրացվում է) ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:

33. Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

4. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

34. Համայնքի ղեկավարն իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում, ինչպես նաև

աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը:

35. Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներն, ինչպես նաև բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

36. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

37. Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:

6. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

38. Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2016թվականի N 09

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 06 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 10-ի «Փողոցն անվանակոչելու մասին» N06 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
-Որոշման մեջ «Հրազդան քաղաքի Միկրոշրջան Դ-1 թաղամասի 1-ին փողոցն» նախադասությունը փոխարինել «Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Սահմանադրության հրապարակին կից Փոքր Բուլվարային փողոցից մինչև «Մականախաղի և շախմատի օլիմպիական մանկապատանեկան մարզադաշտ»» նախադասությամբ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՁԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
8. ՇԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՍԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՅԱՆ
10. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՄԻՐԱՆ
11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2016թվականի N 10

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հրազդան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հրազդանի քաղաքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 123-Ն որոշմամբ հաստատված բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հետևյալ հատկացումները՝

1.Ծախսային մաս՝

Հրազդան քաղաքային համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել՝

1) 1400.0 հազար դրամ 6 բաժնի 4 խմբի 1 դասի 55 ծրագրի <<Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին>> /4655/ հոդվածին էներգետիկ ծառայությունների համար:

2) 15000.0 հազ. դրամ 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Էներգետիկ ծառայություններ>> /4212/ հոդվածին էլեկտրական էներգիայի վարձը վճարելու համար:

3) 200.0 հազ. դրամ 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> /4239/ հոդվածին Արցախի ազգային վիճակախաղի տոմսեր ձեռք բերելու համար:

4) 20000.0 հազ. դրամ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> /4251/ հոդվածին քաղաքի ճանապարհների և փողոցների ընթացիկ նորոգման համար:

5) 5000.0 հազ. դրամ 6 բաժնի 6 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> /4251/ հոդվածին քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգման համար:

6) 2500.0 հազ. դրամ 10 բաժնի 2 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Գույքի և սարքավորումների վարձակալություն>> /4216/ հոդվածին բնակտարածքի վարձակալության համար:

7) 600.0 հազ. դրամ 8 բաժնի 3 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Տեղեկատվական ծառայություններ>> /4234/ տեղեկատվական ծառայությունների գումար:

8) 50.0 հազար դրամ Երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոնին 9 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Կոմունալ ծառայություններ>> /4213/ հողվածին ջրի վարձ վճարելու համար:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՋԱԲԱՐՅԱՆ ՆԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՈՅԱՋՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ
11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2016թվականի N 11

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հրազդան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հրազդանի քաղաքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 123-Ն որոշմամբ հաստատված բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից կատարել հետևյալ հատկացումները՝

1.Ծախսային մաս՝

Հրազդանի քաղաքային համայնքի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացնել՝

1) 4070.0 հազար դրամ 8 բաժնի 1 խմբի 1 դասի 52 ծրագրի /5112/ <<Շենքերի և շինությունների կառուցում>> հոդվածին պուրակի կառուցապատման աշխատանքների համար:

2) 280.0 հազար դրամ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի /5134/ <<Նախագծահետազոտական ծախսեր>> փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծահետազոտական ծախսերի համար:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐԳՅՈՒԺԱ

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԲՍԱՄ

10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2016թվականի N 12

ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի, հիմք ընդունելով Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Հեղինե Ավետիսյանի 2016 թվականի փետրվարի 18-ի թիվ Կ-96 դիմումը և Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Հեղինե Ավետիսյանի կողմից, որպես հողի կադաստրային արժեք վճարված 228000 /երկու հարյուր քսանութ հազար/ և 92000 /իննսուներկու հազար/ դրամ գումարները 900125001140 հաշվից հետ վերադարձնել գործարքը չկայանալու պատճառով:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԼԼՈՂՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԿԱՅԱԳԱՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐԳՈՒԺԱ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՈՊԻԿ
11. ՕՀԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2016թվականի N 13

ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ՋԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ, արվեստի և երաժշտական դպրոցներ հաճախող սոցիալապես անապահով երեխաների վարձավճարները ուսումնասիրելու և գեղչելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2016 թվականի մարտի 11-ի թիվ 1 արձանագրությունը և Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Ջիջել Հրազդանի քաղաքային համայնքի ենթակայության արվեստի և երաժշտական դպրոցներ և նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող ներքոնշյալ երեխաների վարձավճարները 50% -ի և 100%-ի չափով մեկ տարի ժամկետով.

1)Լիլիթ Մակիչի Պողոսյան (թիվ 2 երաժշտական դպրոց, Եր. Քոչարի անվան մանկ. արվ. դպ.-50%)
2) Տաթև Մակիչի Պողոսյան (թիվ 2 երաժշտական դպրոց - 50 %)
3) Արեն Վազգենի Իսայան (թիվ 2 երաժշտական դպրոց - 50 %)
4)Արինե Վազգենի Իսայան (թիվ 2 երաժշտական դպրոց - 50 %)
5) Տաթևիկ Հովսեփյան (թիվ 4 մանկապարտեզ-100%)
6) Լուսինե Գոռի Մելքոնյան (թիվ 6 մանկապարտեզ-50%)

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ

6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

7. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐԳՈՅԱ

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2016թվականի N 14

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հրազդանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 107 շենքի 52-53 բնակարանին կից 20,08քմ մակերեսով սանհանգույցը, խոհանոցը, միջանցքը և պատշգամբը անհատույց օտարել Հովհաննես Արմենակի Էլոյանին, ծնված 1953 թվականի հունվարի 21-ին, անձնագիր AG0507256, տրված 2005 թվականի հուլիսի 12-ին, 049-ի կողմից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿՈՒԼՈՒՅԻ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԿԱՅԱԳԱՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒՆ
7. ԿՆՅԱՑՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ
11. ՕՀԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2016թվականի N 15

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հրազդանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 85 շենքի 15,06քմ մակերեսով 110 բնակարանը անհատույց օտարել Հակոբ Սահակի Սահակյանին, ծնված 1956 թվականի հունվարի 6-ին, անձնագիր 07 05639306 տրված 2006 թվականի օգոստոսի 7-ին 262-031-ի կողմից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԼԼՈՒԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԿԱՅԱԳԱՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐՍՅԻ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐԳՈՒԺԱ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտի 2016թվականի N 16

ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ պարբերության, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Աշոտ Արելյանի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 2-րդ փողոցի թիվ 2 շինությունը 79,97քմ մակերեսով՝ վարձակալել որպես ծերանոց: Յուրաքանչյուր ամսվա համար վարձավճար սահմանել 170000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈՒԼՈՂՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՆՅԱՋՅԱՆ ՍԵՐԳՈՒԺԱ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԻՍՏԱՄ
10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2016թվականի N 17

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հրազդանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոցի 16/1 նախադպրոցական հիմնարկի շենքից 15,79քմ մակերեսով տարածք վարձակալության հանձնել անհատ ձեռներեց Հովակիմ Կարլոսի Գրիգորյանին: Յուրաքանչյուր ամսվա համար վարձավճար սահմանել 3158 (երեք հազար հարյուր հիսունութ) դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԼԼՈՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԿԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆԿԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՆՑԱՋՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ԼՈՒԲԱ
11. ՕՀԱՆՅԱՆ ԻՌԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2016թվականի N 18

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով Եղիազար Բարբարյանի 2015 թվական օգոստոսի 26-ի, Զալիբեկ Խաչատրյանի 2016 թվականի հունվարի 25-ի, Աքիլես Մարտիրոսյանի 2016 թվականի մարտի 03-ի, Արամ Հարությունյանի 2016 թվականի փետրվարի 25-ի, Ռուբիկ Խաչատրյանի 2016 թվականի հունվարի 13-ի, Սեդա Թադևոսյանի 2016 թվականի փետրվարի 01-ի, Հրաչ Աղաջանյանի 2016 թվականի փետրվարի 11-ի, Սոս Միրզոյանի 2016 թվականի փետրվարի 09-ի, Արզիկ Պետրոսյանի 2016 թվականի փետրվարի 16-ի, Զոհրակ Ազիզյանի 2016 թվականի փետրվարի 11-ի, Թամարա Իվանյանի 2016 թվականի մարտի 09-ի, Ժորա Փոռելյանի 2016 թվականի մարտի 11-ի դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 130 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ Եղիազար Բարբարյանի հետ 2005 թվականի մարտի 3-ին կնքած 12.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 8400 /ութ հազար չորս հարյուր/ դրամ:
2.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 18 շենքի թիվ 14 բնակարանի բնակիչ Զալիբեկ Խաչատրյանի հետ 2005 թվականի փետրվարի 10-ին կնքած 59.23քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 15000 /տասնհինգ հազար/ դրամ:
3.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 211շենքի թիվ 37 բնակարանի բնակիչ Աքիլես Մարտիրոսյանի հետ 2010 թվականի հունվարի 18-ին կնքած 20.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 5000 / հինգ հազար/ դրամ:
4.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 85 շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ Արամ Հարությունյանի հետ 2005 թվականի փետրվարի 22-ին կնքած 23.54քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի

տարեկան վարձաչափը սահմանել 6000 /վեց հազար/ դրամ:

5.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 8-րդ շենքի թիվ 3 բնակարանի բնակիչ Ռուբիկ Խաչատրյանի հետ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին կնքած 26.66քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 6700/վեց հազար յոթ հարյուր/ դրամ:

6.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 98 շենքի թիվ 38 բնակարանի բնակչուհի Սեդա Թաղևոսյանի հետ 2010 թվականի մարտի 3-ին կնքած 24.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 6000 /վեց հազար/ դրամ:

7.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 25 շենքի թիվ 31 բնակարանի բնակիչ Հրաչ Աղաջանյանի հետ 2009 թվականի հոկտեմբերի 13-ին կնքած 20.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:

8.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 28 շենքի թիվ 46 բնակարանի բնակիչ Սոս Միրզոյանի հետ 2010 թվականի հուլիսի 6-ին կնքած 20.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:

9.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 41 շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Արզիկ Պետրոսյանի հետ 2005 թվականի նոյեմբերի 22-ին կնքած 20.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:

10.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 77 շենքի թիվ 13 բնակարանի բնակիչ Զոհրակ Ազիզյանի հետ 2005 թվականի փետրվարի 24-ին կնքած 25.52քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 6400 /վեց հազար չորս հարյուր/ դրամ:

11.Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46 շենքի թիվ 52 բնակարանի բնակչուհի Թամարա Իվանյանի հետ 2005 թվականի փետրվարի 2-ին կնքած 20.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:

12. Թույլատրել վերակնքել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 37 շենքի թիվ 98 բնակարանի բնակիչ Ժորա Փոռեյանի հետ 2009 թվականի նոյեմբերի 6-ին կնքած 24.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 19200/տասնինը հազար երկու հարյուր/ դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ

6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

7. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐԳՈՅԱ

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2016թվականի N 19

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N93 ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի, 75-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված բնակավայրերի նպատակային նշանակության հետևյալ հողամասերը՝

1) Կենտրոն թաղամաս, 8-րդ շենքին հարող տարածք թիվ 10 հողամաս՝ 20.0քմ /ավտոտնակ կառուցելու/՝ 5000 /հինգ հազար/ դրամ տարեկան վարձավճարով:

2)Կենտրոն թաղամաս, 29 շենքին հարող տարածք թիվ 20 հողամաս՝ 18.0քմ /առևտրի տաղավար կառուցելու/՝ 14400 /տասնչորս հազար չորս հարյուր/ դրամ տարեկան վարձավճարով:

3)Կենտրոն թաղամաս թիվ 46/10 հողամաս՝ 20.0քմ /ավտոտնակ կառուցելու/՝ 5000 /հինգ հազար/ դրամ տարեկան վարձավճարով:

4)Միկրոշրջան թաղամաս թիվ 132/6 հողամաս՝ 20.0քմ /ավտոտնակ կառուցելու/՝ 5000 /հինգ հազար/ դրամ տարեկան վարձավճարով:

5)Միկրոշրջան թաղամաս Պուրակային փողոց 13/4 հողամաս՝ 20.0քմ /ավտոտնակ կառուցելու/՝ 5000 /հինգ հազար/ դրամ տարեկան վարձավճարով:

2. Չեղյալ ճանաչել Հրազդան քաղաքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 30-ի «Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N 93 որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ի. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿՈՒԼՈՅԱՆ

2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԿԱՐԵ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆԿԵՐ

5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻ

6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԷԼ

7. ԿՆՅԱՋՅԱՆ ՍԵՐԳՈՒԺԱ

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2016թվականի N 20

ՍՈՒՐԻԿ ՖԱՀՐԱԴՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով Սուրիկ Ֆահրադյանին տրված 2006 թվականի մարտի 28-ին տրված թիվ 2149404 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի զրանցման վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Թույլատրել ուղղակի վաճառքով օտարել Մ.Բաղրամյան թաղամասի Զ.Անդրանիկի պողոտա 132 հասցեում գտնվող 54.0քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 310 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Սուրիկ Ֆահրադյանին՝ 103500 /մեկ հարյուր երեք հազար հինգ հարյուր/ դրամ կադաստրային արժեքով /ծածկագիր՝509-091/:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՆՅԱՋՅԱՆ ՄԵՐՋՈՒԺԱ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2016թվականի N 21

*ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հրազդանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասերը.
1)Կենտրոն թաղամաս, Զ. Անդրանիկի պողոտա 11/4 հասցեում գտնվող 422.0քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը՝ 1241000 /մեկ միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝ 07-001-0452-0198/:
2)Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց թիվ 11/1 հասցեում գտնվող 836.0քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը՝ 1600200 /մեկ միլիոն վեց հարյուր հազար երկու հարյուր/ դրամ մեկնարկային գնով / կադաստրային ծածկագիր՝07-001-0515-0028/:
3)Հարավային թաղամաս,Մ.Բաղրամյան փողոց 3-րդ նրբանցք թիվ 13 հասցեում գտնվող 400.0քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը՝ 1176000 /մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասունվեց հազար/ դրամ մեկնարկային գնով / կադաստրային ծածկագիր՝ 07-001-0050-0041/:
4)Հարավային թաղամաս, Շահումյան փողոց 225/1 հասցեում գտնվող 800.0քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը՝ 994000/ինը հարյուր իննսունչորս հազար/ դրամ մեկնարկային գնով /ծածկագիր՝ 795-019/:
5)Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ 29/1 հասցեում գտնվող 120.0քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը՝ 353000 /երեք հարյուր հիսուներեք հազար/ դրամ մեկնարկային գնով /ծածկագիր՝ 444-001/:
2.Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հրազդանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հարավային թաղամասի Երևան-Սևան մայրուղուն հարող տարածքում գտնվող 0,1918հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի

հողամասը՝ 21000 /քսանմեկ հազար/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝ 07-001-4007-0002/:

Կողմ -11 Դեմ -0 Չեղեպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ՋԱՔԱՐՅԱՆ ՆԿԵՐ
5. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
7. ԿՆՅԱՑՅԱՆ ՄԵՐՅՈՇԱ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ
11. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ